

ԿԱՐԾԻՔ

Խորեն Հենրիկի Գրիգորյանի

«ԼԻԲԱՆԱՆԻ ԱՅՆՃԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ» Է.00.04 «ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Խորեն Գրիգորյանի ատենախոսությունը, որի նպատակն է ազգագրական քննության միջոցով վերհանել Լիբանանի Այնճար գյուղի հայ բնակչության ինքնության կառուցակցումն ու փոխակերպումները, խիստ արդիական է էթնիկ և ազգային ինքնությունների վերաբերյալ ժամանակակից ակադեմիական քննարկումների դիտանկյունից: Ուսումնասիրությունը ներառում է ինքնության կառուցակցման, պահպանման և փոխակերպման վերաբերյալ ժամանակակից բանավեճերի մանրամասն քննություն: Ժամանակակից գիտական բանավեճերի տեսանկյունից, հեղինակի եզրահանգումները և բացահայտումները, որոնք բխում են հայկական մեկ համայնքի դեպքից, թույլ են տալիս պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես են առանձին խմբերը/համայնքները բանակցում և կառուցում իրենց պատկանելության պատմությունները, ինչպես է պատմական տրավման ազդում ինքնության վրա և ինչպես են խմբային ինքնությունները ձևավորվում և փոխանցվում սերնդեսերունդ: Հետազոտությունն առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ այն ուսումնասիրում է ոչ միայն Մուսա լեռան հայերի պատմական հետազիծը, այլև այն գործընթացները, որոնց միջոցով էթնիկ ինքնությունը վերափոխվում է սփյուռքում ընդհանրապես: Ուսումնասիրությունը ունի միջդիսցիպլինար բնույթ: Աշխատանքը դիտարկվում է ազգագրական, պատմական և սոցիալական տեսանկյուններից, ինչը այն դարձնում է խիստ արժեքավոր ոչ միայն ընդհանուր գիտական շրջանակներում, այլ նաև հայկական սփյուռքի ուսումնասիրությունների համատեքստում: Աշխատանքում կիրառված պատմահամեմատական վերլուծությունը, ազգագրական 120 գրույցները, բանավոր պատմությունների և գրավոր արձանագրությունների մեկտեղումը թույլ են տվել ատենախոսին դուրս բերել այն խորքային հարցերն ու խնդիրները, որոնք վերաբերում են առաջադրված հետազոտական հարցերին:

Հեղինակն իր առջև դրված հետզոտական խնդիրները լիարժեքորեն և մանրամասն քննության է ենթարկում, բացահայտելով «Սվեդիացի» և «Մուսավեոցի» խմբի անվանման առաջացման և փոխակերպման պատճառները, մուսավեոցիների ինքնության և «ծագման» նարրատիվ-պատում-առասպելների զարգացումները՝ ինչպես գրավոր այնպես էլ բանավոր աղբյուրների համադրման միջոցով, վերհանելով Մուսավեոսն ինքնապաշտպանական մարտերի ընթացքը, դրա պատմականացման և առասպելացման համատեքստը, Այնճարում մուսավեոցների հաստատվելու փորձերը և Այնճարի մուսավեոցիացումը:

Ուսումնասիրության տեսական մասը հիմնականում կազմում են Ռ. Բրուբեյքերի, Ա. Ասամանի և Ֆ. Բարտի աշխատությունները, որոնց հիման վրա հեղինակը ընդգծում է ինքնության հեղիեղուկ և կոնստրուկտիվիստական բնույթը: Բրուբեյքերի էթնիկության, ինքնության և խմբի վերաբերյալ մոտեցումները հիմք են դարձել հետզոտական աշխատանքի առանցքային հասկացությունների վերախմաստավորման և բացատրման համար: Ատենախոսության մեջ անցյալի մասին կամ անցյալի վերաբերյալ հիշողությունների ու դրանց սոցիալական զարգացումների խնդիրը քննվել է Ա. Ասամանի՝ անցյալի հիշողության վերաբերյալ մոտեցումների համատեքստում: Մրանց հիման հեղինակը գիտականորեն հիմնավորել է դաշտային աշխատանքների և գրավոր աղբյուրների համեմատական հետզոտության իրականացման ընթացքում առանձնացված առասպելական և պատմական իրողության մասին իմացության փոխակերպումները: Աշխատանքում առանցքային նշանակություն է ունեցել նաև Ֆ. Բարտի՝ էթնիկ խմբերի ինքնության, սոցիալական և մշակութային տարածքների մասին տեսությունները:

Աշխատության մեջ առանձնահատուկ կարևորություն ունի «Մուսավեոցի» և «Այնճարցի» ինքնությունների էվոլյուցիան և դրա բացատրությունը: Հեղինակը, անդրադառնալով երևութի խորքային կողմերին, հստակորեն ցույց է տալիս ինքնության կառուցակցման գործընթացն՝ իր ներքին հակադրություններով, առանցքային դերակատարների ազդեցությամբ, ներքին և արտաքին հակասություններով ու ճգնաժամերով: Ուսումնասիրության մեջ հեղինակը

բացահայտում է ինքնության բազմաշերտ բնույթը՝ եզրութաբանական վերլուծության ենթարկելով «մուսալեոցի» և «այնճարցի» եզրերի փոխկապվածությունն ու փոխազդեցությունը: Տրամաբանական հաջորդականությամբ ներկայացնում է «Մուսալեոցիների» (Մուսա լեռան հայերի) զարգացումը որպես ինքնության հստակ ցուցիչ՝ ազդված 1915 թվականի ինքնապաշտպանության և դրան հաջորդած բռնի գաղթից: Ժամանակի ընթացքում «Այնճարցին» ի հայտ եկավ որպես Լիբանանի Մուսա լեռան ժառանգների տեղայնացված/լոկալ ինքնություն, որը ձևավորվեց նոր հասարակա-քաղաքական միջավայրով: Ատենախոսը ընդգծում է, թե ինչպես են պատմական նարատիվները նպաստում ինքնաճանաչմանը. 1915թ. -ի հերոսական դիմադրությունը, որը հայտնի դարձավ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» աշխատությամբ, դարձավ մուսալեոցու ինքնության առանցքային կետը: Ապա 1939թ. -ից հետո Այնճարի բնակեցումը հանգեցրեց հիբրիդային ինքնության, որը ներառում էր լիբանանյան և հայկական սփյուռքի տարրերը:

Ատենախոսության էական կողմը կոլեկտիվ հիշողության վերլուծությունն է: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես Մուսա լեռան դիմադրության առասպելացումը դարձավ խմբային ինքնության ամրապնդման գործոն և թե պատմական նարատիվները ինչպես են ընտրողաբար հիշվում կամ մոռացվում՝ ելնելով քաղաքական և սոցիալական համատեքստերից: Հեղինակը նաև ցույց է տալիս, թե ինչպես են պատմական իրադարձությունները վերակառուցվում՝ համապատասխանեցնելով ժամանակակից ինքնության կարիքներին: Ինչպես փաստում է հեղինակը՝ հետազոտությունը ցույց է տալիս ինքնությամբ մեծ խմբի՝ հայության մեջ, փոքր խումբը՝ «մուսալեոցի-այնճարցին» 20-րդ դարի որոշակի քաղաքական իրողությունների թելադրանքով ինքնության իր մասնավոր տեղը հաստատում է թե՛ ընդհանուր ինքնության արժեքներում, թե՛ փնտրում և գտնում է իր մասնավոր փորձի արժեքներում, ընդ որում, դրանք ոչ միշտ են ուղղորդվում քաղաքականորեն ծրագրավորված, երբեմն մեծ են նաև ներխմբային և արտախմբային ազդեցությունները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, քսաներեք ենթագլխից, վերջաբանից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Առաջին գլխում ներկայացվում են «մուսալեոցի» և «սվեդիացի» ինքնանվանումների և մուսալեոցիների ծագման նարրատիվ-պատում-առասպելների տարբերակները և դրանց զարգացումները: Դրա հետ փոխկապակցված ներկայացվում է Սվեդիա-Մուսալեոի աշխարհագրական դիրքի տեղանքի հիշատակումների վերաբերյալ, և մինչ 1915 թ. եղած անդրադարձների ժամանակագրական քննությունը: Մասնավոր անդրադարձ է արված ծագման պատմությանը և պատումներին, որոնք լրացուցիչ նյութերով նպաստում են խմբի պատմական անցյալի վերաբերյալ առկա գրավոր տեղեկություններով վերականգնվող ժամանակագրության հստակեցմանը: Երկրորդ գլխում, որը վերնագրված է «Մուսալեոան ինքնապաշտպանական մարտեր: Պատմական դեպքեր և առասպելացում», հեղինակը համադրել է պատմական դեպքերի և դրանց վերաբերյալ բանավոր հիշողության տարբերությունները, այդ տարբերությունների պատճառները և դրանց ազդեցությունն Այճարի մուսալեոցու ինքնության զարգացումներում: Երրորդ գլխում քննարկվում է. ա) Ալեքսանդրեթի սանջակը ֆրանսիական մանդատից և սիրիական ենթակայությունից դուրս բերելու, թուրքական հանրապետությանը հանձնելու որոշման հետևանքով սանջակում սպրոդ հայերի, այդ թվում՝ մուսալեոցիների կողմից սանջակը լքելու հայկական նախաձեռնությունները և, որպես ուշագրավ երևույթ, այդ պատմական դեպքի մասին պատմվող հիշողությունների բացակայությունն այնճարցիների մոտ, բ) Այնճարում հաստատվելու, տեղանքին ինտեգրվելու պատումների ձևավորումները և դրանց ազդեցությունն Այնճարի մուսալեոցիների ինքնության վրա, գ) Մուսալեոցիների՝ վեց գյուղերի «այնճարացումը» որպես միասնական օրգանիզմ, ընդհանուր համայնք, այդ թվում նաև վեց առանձին բնակավայրերի բնակիչների լոկալ ինքնությունները պահպանող համակցություն, դ) Այնճարի ինքնակառավարման համակարգի ձևավորումն՝ ըստ թաղամասերի, ե) Այճարի բնակչության մոտ կեսի ներգաղթը Խորհրդային Հայաստան և Այնճարի մուսալեոցիների միակուսակցականացումը, զ) պատմական հիշողության ձևավորումը և Դաշնակցության կողմից «հիշողության

համակարգողի» դերի ստանձնումը, է) «հիշելու» և «մոռանալու» ընտրությունը և այլն: Հեղինակի աշխատանքը արժեքավոր են դարձնում նրա կողմից օգտագործված գրականությունը՝ արխիվային նյութերը, մենագրությունները, հոդվածները, ինչպես նաև Հավելվածը, որում ներկայացված են Պորտ Սայիդի գաղթականների հատակագիծը, Այնճար տեղափոխվելու առաջին տարիներից լուսանկարները՝ դեռևս վրանային կացարաններից, ինքնապաշտպանական մարտերի հերոսացած անձանց լուսանկարները, Այնճար տեղափոխման առաջին տարիներին կառուցված «ֆրանսական տներ»-ի լուսանկարները, Այնճարի համայնապատկերի և տոնակատարության և հերոսամարտին նվիրված հուշարձանների լուսանկարները:

Պետք է մասնանշել, որ Խ. Գրիգորյանի ատենախոսություն ունի կոտ և գերհագեցած կառուցվածք: Այն եզակի և համապարփակ ուսումնասիրություն է, ինչը կարևոր ներդրում է այս ոլորտի հետագա ուսումնասիրությունների համար:

Բարձր գնահատելով ատենախոսի կողմից իրականացված հսկայական աշխատանքը ներկայացված թեմայի վերաբերյալ՝ կան մի քանի նկատառումներ և առաջարկություններ.

Մասնավորապես.

- Աշխատանքը կշահեր, եթե դրա մեթոդաբանական բաժնում, հատկապես ներածական մասում, հեղինակը մանրամասն նկարագրեր բանասացների ընտրության սկզբունքները, ներկայացներ հարցազրույցների շրջանակը, ինչպես նաև տրամադրեր որոշակի տվյալներ բանասացների սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական կամ այլ հատկանիշների վերաբերյալ: Չնայած ատենախոսության տարբեր հատվածներում հանդիպում ենք մասնակի բացատրությունների, այդ տեղեկությունների ամբողջական և համակարգված ներկայացումը հնարավորություն կտար ավելի լավ հասկանալու տվյալների հավաքագրման մոտեցումը և հետազոտության ընթացքը:
- Ատենախոսության սեղմագրում հեղինակը հստակորեն և հիմնավորված կերպով ընդգծում է իր հետազոտության գործնական կարևորությունը, մասնավորապես՝ Այնճարի համայնքի ներուժի գնահատման և ՀՀ-Սփյուռք

հարաբերությունների կառուցման տեսանկյունից: Այս առումով
ատենախոսության եզրահանգումների բաժինը կարելի էր էլ ավելի ուժեղացնել,
եթե այնտեղ ներկայացվեին ռազմավարական նշանակության
առաջարկություններ, գործնական կիրառման հնարավորություններ կամ
հետագա ուսումնասիրությունների համար առաջնահերթ ուղղություններ:

- Աշխատանքի խնդրո առարկան գտնվում է նաև և մեծամասամբ սփյուռքի
ուսումնասիրությունների դաշտում, ուստի այն կդառնար ավելի ամբողջական,
եթե ներառեր ավելի շատ սփյուռքագիտական տեսություններ: Այսպիսի
համալրումը ոչ միայն կխորացներ աշխատության տեսական հիմնավորումը,
այլև այն կդարձներ արժեքավոր ներդրում համեմատական
սփյուռքագիտության զարգացման և հայկական սփյուռքի այլ համայնքների
կամ խմբերի ուսումնասիրության տեսանկյունից:
- Չնայած ատենախոսությունն ընդհանուր առմամբ կառուցվածքային առումով
կուռ է և համակարգված, որոշ հատվածներում հեղինակը հեռանում է
հիմնական թեմայից, անդրադառնում լայնամասշտաբ պատմական,
սոցիալական կամ մշակութային հարցերի, որոնք ուղղակիորեն չեն առնչվում
աշխատության հիմնական խնդիրներին: Սա, մի կողմից հետաքրքիր և
բազմաշերտ է դարձնում ուսումնասիրությունը, սակայն մյուս կողմից
ծանրաբեռնում ընթերցողին:
- Ատենախոսությունը պարունակում է որոշ տեխնիկական և խմբագրական
վրիպակներ, որոնք, սակայն, էական ազդեցություն չունեն աշխատանքի
ընդհանուր բովանդակության և գիտական արժեքի վրա: Այս թերությունները
հնարավոր է հեշտությամբ շտկել հետագա մանրակրկիտ վերանայման և
խմբագրման միջոցով:

Ներկայացված նկատառումները որևէ կերպ չեն սուվերում ատենախոսական
աշխատանքի գիտական արժեքը, և դրանք առաջարկություններ են հեղինակի
հետագա հետազոտական աշխատանքների զարգացման համար:

Ատենախոսի հրատարակած աշխատություններում արտացոլվում են
ատենախոսության էական դրույթները: Սեղմագրում արտացոլված են աշխատանքի
հիմնական բովանդակությունը և հիմնական ձեռքբերումները:

Խորեն Հենրիկի Գրիգորյանի ատենախոսությունը ավարտուն գիտական
աշխատանք է, ունի այժմեական կարևոր տեսական և գործնական նշանակություն:

Խորեն Հենրիկի Գրիգորյանին «Լիբանանի Այնճար բնակավայրի հայ բնակչության
ինքնության փոխակերպումները» թեկնածուական ատենախոսությունը բավարարում
է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող
պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Է.00.04 «ազգագրություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀԱԻ սփյուռքի ուսումնասիրության բաժնի
ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Լուսինե Ասատուրի
Տանաջյան

Պաշտոնական ընդդիմախոս Լուսինե Ասատուրի Տանաջյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

ՀԱԻ գիտական զծով փոխտնօրեն Բ. Գ. Բ. Տորք Սամվելի
Դալայան



11. 02. 2025 թ.